ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԳԱՌՆԻԿԻ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ և ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
АЙВАЗЯН АНАИТ ГАРНИКОВНА

СУЩНОСТЬ И СОДЕРЖАНИЕ СУБЬЕКТА ПРАВА:ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ.

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր **Ա.Մ. Խաչատուրյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Լ.Մ. Մալխասյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ոստիկանության կրթահամալիր-ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. հունիսի 1-ին ժ. 14^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2022 թ. ապրիլի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **Ջ.Հ.Հայրապետյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Тема диссертации утвервждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук,профессор **Степанян О.М.**

Официальные оппоненты: доктор юридических наук, **А.М. Хачатурян**

кандидат юридических наук, **Л.М.Малхасян**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**

Защита состоится 01 июня 2022 г. 14^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван,0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ

Автореферат разослан 18 апреля 2022 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտության արդիականությունը. Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխությունները, որոնք պայմանավորված են անձի՝ սոցիալական ոլորտում բարձրացմամբ, հասարակական հարաբերությունների հումանիզացիայով, ավելի ու ավելի հաճախ են ընկալվում իրավագետների ու փիլիսոփաների կողմից որպես նոր քաղաքակրթության, հաղորդակցման ու գործունեության նոր միջոցների ձևավորման գործընթաց, որոնք սահմանում են սուբյեկտների միջև նոր սկզբունքներ և կանոններ: Ելնելով այն սոցիալ-իրավական կարգավիճակից, որը տրվում է իրավական աշխարհում փոփոխվող մարդուն, նրա իրավունքներին ու ազատություններին, իրավագիտությունը պետք է պատրաստ լինի ձևակերպել նոր մոտեցումներ և հայեցակարգեր իրավունքի սուբյեկտի վերաբերյալ:

Խոսքը գնում է նոր իրավական ընկալման, իրավունքի ոչ թե օբյեկտիվորեն, իրավական կոմունիկացիայի մասնակիցներից անջատ, այլ սուբյեկիտվորեն հասկացման մասին, որում իրականացվում են մարդու իրավական որակները, նրա շահերը, ձևավորվում է իրավական անձը: Իրավունքի նման ընկալման դեպքում հաշվարկի սկզբնակետը կոորդինատների իրավական համակարգում պետք է լինի ոչ թե իրավունքի նորմը կամ այլ մարդու հանդեպ արտաքին օբյեկտը, այլ իրավունքի սուբյեկտը: Իրավունքի նման սուբյեկտի ընկալումը ենթադրում է մի շարք տեսական դրույթների և իրավական կառույցների վերանայում և վերաիմաստավորում:

Հայաստանն իրականացնելով իր առջև դրված համաշխարհային տնտեսական և իրավական տարածություն ինտեգրվելու նպատակը, դառնում է նոր քաղաքակրթության ձևավորման գլոբալ գործընթացի, սոցիալական նոր հարաբերությունների տիպի մասնակից: Սրա հետ կապված՝ իրավունքի սուբյեկտի տարբեր խնդիրները, իրավական կումունիկացիայի հարցերը ստանում են հատուկ նշանակություն արդի իրավագիտության համար: Բացի դրանից՝ ժամանակակից հայ հասարակության ներքին բարեփոխման գործընթացները իրավական պետության կայացման, քաղաքացիական հասարակության նպատակներով նույնպես պայմանավորում են իրավունքի սուբյեկտի խնդրի հետազոտության արդիականությունը:

Այս առումով տեսական իրավագիտությունը պետք է մշակի նոր մոտեցումներ- երկրում իրականացվող փոփոխությունների իրավական հիմքերն ամրապնդելու համար:

Գնահատելով գործող պատկերացումներն իրավունքի սուբյեկտի մասին, որոնք ձևավորվել են իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում, կարելի է

նշել հետևյալը:

Առաջին՝աշխատանքների հեղինակները հիմնվում էին արժեքների այլ համակարգի վրա, որոնց համաձայն մարդուն որպես իրավունքի սուբյեկտի՝ տրվում էր միայն գործիքային դեր, նա դիտարկվում էր որպես միջոց պետության ձեռքում՝ իր քաղաքական նպատակների իրականացման համար: Երկրորդ՝ իրավունքի ընդհանուր տեսության մեջ կիրառվող իրավունքի սուբյեկտի մասին պատկերացումները փոխառված են ցիվիլիստական (քաղաքացիական) գիտությունից: Այս պատկերացումները չեն անցել անհրաժեշտ տեսական վերամշակում, և դրանց նախապես տրված էր ընդհանուր տեսական բնույթ: Քաղաքական-իրավական ոլորտում իրավունքի սուբյեկտը դիտարկվում է որպես մասնավոր անձ, գույքային-իրավական հարաբերությունների մասնակից: Այս գույքային ոլորտը սահմանիչ է քաղաքացիական իրավունքի, քաղաքացիական-իրավական հարաբերությունների ու դրանց մասնակիցների համար, բայց այն բավարար չէ իրավունքի այլ ճյուղերի համար: Նոր օրենքները, որոնք կարգավորում են հանրային-իրավական հարաբերությունները, որպես համապատասխան հարաբերությունների մասնակիցներ սահմանում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ ֆիզիկական ու իրավաբանական անձանց հասկացություններն ի սկզբանե ձևավորվել են որպես մասնավոր իրավական, այստեղից էլ նրանց կիրառությունը հանրային իրավունքում չի կարող չառաջացնել բարդություններ: Պատահական չէ, որ ճյուղային իրավական գիտություններում նշմարվել է կայուն միտում իրավունքի իր սեփական ոլորտային սուբյեկտների ստեղծման հանդեպ: Գիտականորեն հիմնավորված տեսական հիմքերի բացակայությունը բերում է ճյուղային իրավաբանական գիտությունների կողմից իրավունքի սեփական սուբյեկտների սահմանման փորձերի:

Երրորդ՝ խորհրդային իրավագիտությունում առկա էր միտում իրավունքի սուբյեկտի նատուրալիզացիայի վերաբերյալ: Իրավունքի սուբյեկտը հաճախ դիտարկվում է որպես մի երևույթ, որը ֆիզիկապես առկա է: Մասնավորապես, այսպես կոչված, ֆիզիկական անձին՝ իրավունքի սուբյեկտին, սովորաբար տեսնում են ոչ թե իրավական աբստրակցիա, իրավաբանական հասկացություն, այլ իրական նյութական անձ, ով ֆիզիկապես գոյություն ունի: Մարդը որպես իրավական երևույթ խառնվում է նյութական կրողի, բնական էակի հետ: Եզրույթը, որը կիրառվում է մարդու՝ որպես իրավունքի սուբյեկտի նշանակման համար, շատ ճշգրտորեն փոխանցում է տվյալ պատկերացման բնույթը: Իրավական անձը դիտարկվում է որպես որոշակի նյութական սուբստանցիա: Դրա հետ կապված ճիշտ է նշել այն հանգամանքը, որ իրավական անձի՝ որպես նյութական անձի հանդեպ վերաբերմունքը, հակասության մեջ է մտնում իրավունքի՝ որպես

իդեալական գոյի մասին պատկերացումների հետ: Այս հանգամանքը թույլ չի տալիս որակել առկա պատկերացումները իրավունքի սուբյեկտի մասին որպես տեսական-իրավական:

Չորրորդ՝ առկա պատկերացումներն իրավունքի սուբյեկտի մասին չունեն ամբողջական, տրամաբանորեն ավարտուն բնույթ: Իրավունքի սուբյեկտի հասկացման շատ ոլորտներ դեռևս չհետազոտված են մնում, լուծված չի պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի խնդիրը, այսօր օրենսդիրը, ով հրաժարվել է դիտարկել պետությունը որպես իրավաբանական անձ, ստեղծել է սև անցք իրավունքում, իրավագիտության առջև դրել է դժվար խնդիր՝ սահմանել թե որն է իրավունքի նոր սուբյեկտը, նաև ավարտուն չէ մարդու՝ որպես իրավական երևույթի խնդրի ավարտուն տեսական լուծումը, եթե այն չնույնականացվի ֆիզիկական անձի կամ քաղաքացու հետ: Իրավասուբյեկտիվության՝ որպես իրավունակության և գործունակության միասնության կառույց, ներքնապես նույնպես հակասական է, անտրամաբանական, իրավաբանական անձանց հանդեպ անհնար է կիրառել գործունակության հասկացությունը, որը ձևակերպվել է ֆիզիկական անձանց միջոցով և այլն: Տեսական գիտելիքը պետք է մեկնաբանի, բացատրի օբյեկտը բազմակողմանիորեն, սահմանի նրա ներքին օրինաչափությունները՝ հիմնվելով տրամաբանական-մեթոդաբանական սկզբունքների և կանոնների վրա. Այն գիտական գիտելիքի կազմակերպման բարձրագույն ձև է: Հենց դա է պակասում իրավունքի սուբյեկտի մասին ավանդաբար ձևավորված պատկերացումներին: Տվյալ հանգամանքների հաշվառմամբ կարելի է եզրակացնել, որ իրավագիտությունում դեռևս չի ձևավորվել իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսություն կամ հայեցակարգ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն հետազոտության նպատակը կայանում է նրանում, որպեսզի ձևակերպվի իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսական-մեթոդաբանական հիմքերը, ձևակերպվի նրա կարևոր հիմնադրույթները:

Նշված նպատակին հասնելու համար դրված են հետևյալ հետազոտական **խնդիրները.**

- բացահայտել իրավունքի սուբյեկտի ընդհանուր հասկացությունը և առանձնահատկությունները,
- բացահայտել իրավասուբյեկտություն կատեգորիայի իրավաբանական բովանդակությունը և կառուցվածքային տարրերը,
- սահմանել իրավունքի սուբյեկտների դասակարգման հիմքերը,
- վերլուծել անհատի՝ որպես իրավունքի սուբյեկտի հասկացությունը և բովանդակությունը,

- վերհանել իրավաբանական անձի նորմատիվ-իրավական էությունը և բովանդակային առանձնահատկությունները,
- սահմանել պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի յուրահատկությունները:

Հետազոտության գիտական-տեղեկատվական և տեսական հիմքերն են. իրավունքի փիլիսոփայության, իրավունքի ընդհանուր տեսության, ճյուղային իրավաբանական գիտությունների գծով աշխատությունները, որոնց հեղինակներն են՝ Ն. Ա. Ապիյանը, Հ. Մ. Ստեփանյանը, Գ. Հ. Սաֆարյանը, Ա. Գ. Վաղարշյանը, Ս. Ս. Ալեքսեևը, Վ. Կ. Բաբաևը, Վ. Մ. Բարանովը, Մ. Ի. Բրագինսկին, Ս. Ն. Բրատուսը, Ա. Մ. Վասիլևը, Ա. Բ. Վենգերովը, Ն. Ա. Վլասենկոն, Ն. Ն. Վոպլենկոն, Վ. Պ. Գրիբանովը, Օ. Ս. Իոֆեն, Վ. Բ. Իսակովը, Վ. Պ. Կազիմիրչուկը, Վ. Ն. Կարտաշովը, Դ. Ա. Կերիմովը, Ա. Ի. Կովլերը, Օ. Ա. Կրասավչիկովը, Վ. Ն.Կուդրյավցեցը, Մ. Ի. Կուլագինը, Օ. Ե. Կուտաֆինը, Վ. Վ. Աազարևը, Վ. Վ. ևապտևը, Վ. Ի. Լեուշինը, Ե. Ա. Աուկաշևան, Ա. Վ. Մալկոն, Մ. Ն. Մարչենկոն, Ն. Ի. Մատուզովը, Վ. Ս. Ներսեսյանցը, Վ. Դ. Պերեվալովը, Բ. Ի. Խուգինսկին, Ֆ. Մ. Ռ-այանովը, Վ. Կ. Սամիգուլինը, Ի. Ս. Սամոշենկոն, Վ. Ա. Սապունը, Կ. Ի. Սոկլովսկին, Ա. Ի. Սպիրոդոնովը, Վ. Մ. Սիրիխը, Ե. Ա. Սովսանովը, Ն. Ն. Տարասովը, Յու. Ա. Տիխոմիրովը, Յու. Կ. Տոլստոյը, Ա. Ֆ. Չերդանցևը, Վ. Ա. Շաբալիեը, Ա. Ս. Յավիչը, Վ. Ֆ. Յակովլևը, Վ. Ս. Յակուշևը և այլք:

Մեծ ուշադրություն է դարձվել ռուս նախահեղափոխական իրավագիտության ներկայացուցիչների աշխատանքների հետազոտմանը, մասնավորապես նրանցից են Ն. Ն. Ալեքսեևը, Կ. Ն. Անենկովը, Յու. Ս. Գամաբարովը, Ա. Ա. Գերվագենը, Վ. Մ. Գեսենը, Ն. Ա. Դյուվերնուան, Վ. Բ. Ելյաշևիչը, Ի. Ա. Իլյինը, Կ. Կավելինը, Ա. Ի. Կամինկան, Բ. Ա. Կիստյակովսկին, Ն. Մ. Կորկունովը, Դ. Ի. Մեյերը, Ս. Մուրոմցեվը, Պ. Ի. Նովգորոդցևը, Հ. Ի. Պետրաժիցկին, Վ. Ի. Սինայսկին, Ն. Ս. Սուվորովը, Ֆ. Վ. Տարանովսկին, Ե. Ն. Տրուբեցկին, Բ. Ն. Չիչերինը, Գ. Ֆ. Շերշենևիչը և այլք:

Հետազոտության ընթացքում հեղինակը հիմնվել է նաև արտասահմանյան հեղինակների աշխատանքների վրա, ինչպիսիք են՝ է. Բեկլերը, ժ. Ա. Բերժելը, Գ. Բեզելերը, Ի. Բլունչիլին, Ա. Բրինցը, Բ. Վինդշտեյդը, Օ. Գիրկեն, Ռ. Գավիթը, Դ. Սյուգին, Գ. Դերնբուրգը, Գ. Ելինեկը, Ռ. հերինգը, Գ. Կելզենը, Իս. Կետցը, Պ. Ասբանդը, Ա. Միշուն, Գ. Պուխտան, Ֆ. Սավինյին, Ռ. Սալեյլը, Կ. Յվանգերտը, է. Յիտելմանը և այլք: Բացի դրանից հետազոտության ընթացքում կիրառվել են դասականների՝ Արիստոտելի, Պլատոնի, Գոբսի, Լոկի, Մոնտեսքյուի, Ռոսոյի, Կանտի, Հեգելի և այլոց աշխատանքները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են կազմում գիտական

ճանաչողության, դիալեկտիկ մտածողության ընդհանուր սկզբունքները, համագիտական և մասնավոր-գիտական մեթոդները՝ համակարգային-կառուցվածքային վերլուծության, համեմատական-իրավաբանական, ձևական իրավաբանական վերլուծության և այլն:

Մեկ այլ մասնավոր մեթոդ, որը կիրառվել է հետազոտության արդյունքում՝ ինտեգրատիվ մոտեցումն է: Ինտեգրատիվ մոտեցումը թույլ է տվել հեղինակին նշանակալի չափով հաղթահարել վերլուծական իրավաբանության էվրիստիկ թերությունները, քանի որ այն տալիս է հնարավորություն օրգանապես միավորել իրավական միջոցները, իրավական գործիքավորումը, իրավական նյութը և իրավունքի ոգին՝ հիմնարար իրավական գաղափարներ, իրավական իդեալներ, իրավունքի սկզբունքներ: Դրանով իսկ հաղթահարվում է պոզիտիվիզմի էմպիրիկ միակողմանիությունը:

Հետազոտության օբյեկտ է հանդիսանում իրավունքի սուբյեկտը որպես սոցիալ- իրավական երևույթ:

Հետազոտության առարկան է.

- Իրավունակության և գործունակության, ֆիզիկական անձի, իրավաբանական անձի և հարակից նորմատիվ իրավական կատեգորիաները, որոնք բնորոշ են իրավունքի սուբյեկտների սահմանման համար,
- Իրավունքի սուբյեկտների ոլորտները, հատկանիշները, իրավական որակները, որոնք դրսևորվում են իրավական իրականությունում, իրավահարաբերություններում, իրավունքների իրացման ժամանակ և այլն,
- Իրավունքի սուբյեկտի մասին տեսական պատկերացումները, որոնք ձևավորվել են իրավագիտության մեջ:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ մենագրության մակարդակով ձեռնարկվել է իրավունքի սուբյեկտի խնդրի համալիր, բազմակողմանի վերլուծություն, իրականացվել է քննական վերլուծություն՝ իրավունքի ընդհանուր տեսության և ճյուղային իրավաբանական գիտությունների դոկտրինալ մոտցումները իրավունքի սուբյեկտի վերաբերյալ և դրա արդյունքների հիման վրա մշակվել է իրավունքի սուբյեկտի հեղինակային հայեցակարգային մոտեցումը:

Անցկացված վերլուծության արդյունքների հիման վրա ենթադրվում է, որ իրավունքի սուբյեկտների համակարգի հասկացությունը գիտակցվում է սուբյեկտների կոմունիկացիոն համակարգ (շփման, հարաբերություններ համակարգ): Ըստ այդմ սահմանվում են կոմունիկացիայի իրավական տիպի առանձահատկությունները, իրավական կոմունիկացիայի և իրավական կարգավորման հարաբերակցությունը: Աշխատանքում առաջարկվում է իրավունքի

ու իրավական համակարգի առաջնային տարրի՝ իրավունքի սուբյեկտի հայեցակարգային մոտեցումը՝ այսինքն՝ ոչ թե նորմակենտրոն, այլ անձնակենտրոն (իրավունքի սուբյեկտի առումով) իրավական համակարգի գաղափարը, ինչպես նաև ընդհանուր տեսական դիրքերից սահմանվում են իրավունքի սուբյեկտների դասակարգման հիմքերը, իրավաբանական անձի էության տարբեր մակարդակները, պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի առանձնահատկությունները, ձևակերպված է նաև մետահիրավական սուբյեկտի նոր համատեսական հասկացությունը:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթները.

1. Իրավունքի սուբյեկտը բազամաշերտ երևույթ է, որը կապված է ֆորմալ իրավագործունակության հետ: Իրավունքի սուբեյկտը կարող է դիտարկվել որպես իրավական անձ, որպես իրավական կանոն, որպես իրավական կամք, որպես իրավական կապերի, հարաբերությունների միասնական բազմություն, որպես իրավական պատկերացումների, զգացմունքների, հույզերի, ապրումների ամբողջական համակարգ, որպես բարձրագույն սոցիալական-իրավական արժեք, որը սահմանում է բոլոր այլ արժեքները իրավունքում, որպես իրավական գործիք՝ ցանկացած իրավական ակտիվության աղբյուր, որից ելնում են իրավական ակտերը, իրավաբանական գործողությունները, արարքները և այլն: Իրավունքի սուբյեկտի դիտարկման շատ ասպեկտներ չեն բացառում նրա հասկացության միասնությունը, որը կարելի է սահմանել հետևյալ կերպ, իրավունքի սուբյեկտը հատուկ իրավաբանական ձևի մեջ ամփոփված մարդու (իրավական անձի) և կազմակերպված կառույցների (իրավաբանական անձանց) որակների միասնություն է:

2. Իրավունքի համակարգի առաջնային համակարգաստեղծ տարր է, մեր կարծիքով, ոչ թե իրավական նորմը, այլ իրավունքի սուբյեկտը (իրավական անձը): Իրավունքի համակարգը սուբյեկտների և նրանց փոխկապակցվածության համակարգ է, որում համակցվում են իրավական անձինք, ովքեր համագործակցում են միմյանց հետ: Իրավունքի նորմերը նրանում կատարում են միայն ծառայողական դեր, որոնք հանդիսանում են իրավական կոմունիկացիայի տարր՝ ապահովելով իրավունքի սուբյեկտների միջև կապը: Իրավունքի՝ որպես ամբողջական, ինքնակառավարվող համակարգի դիտարկման ժամանակ կարելի է պնդել, որ այն ենթադրում է սեփական սուբյեկտի առկայություն: Ո՛չ նորմը, ոչ իրավահարաբերությունը, ոչ իրավունքի իրացման, կիրառման ակտը և նման այլ տարրեր չեն կարող հանդես գալ որպես իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերի միմյանց կապող օղակ: Այսպիսի օղակ կարող է լինել միայն իրավունքի

սուբյեկտը:

Իրավունքը գոյություն չունի առանց սուբյեկտի, այն իրենից ներկայացնում է ստեղծագործության արդյունք: Իրավական նորմերը, իրավահարաբերությունները, ամբողջ իրավական կատեգորիաները գործադրվում են իրավունքի սուբյեկտի շուրջ և վերջինիս միջոցով իրավունքը գոյություն ունի ոչ թե ինքնին, այլ սուբյեկտի միջոցով, սուբյեկտի գիտակցական կամքով՝ բոլորի համար ընդհանուր չափով ու ծավալով:

3. Իրավունքի՝ որպես սուբյեկտիվ-կոմունիկատիվ համակարգի համար բնորոշ է կոմունիկացիայի հատուկ տիպը: Իրավական կոմունիկացիան հիմնվում է ընդհանուր իրավական կամքի ձևավորման գաղափարի վրա, որում համատեղվում են երկու կամ ավելի անձանց կամքը: Կոմունիկացիայի իրավական եղանակը վերաբերում է ոչ թե կամքի բովանդակությանը, այլ արտաքին կողմին: Ոչ օրենսդիրը, ո՛չ դատավորը իրավական կոմունիկացիայում չեն կարող պարտագրել իրենց սեփական կամքը նրա մասնակիցներին՝ վերջինիս կամքի փոխարեն: Կոմունիկացիայի նման տեսակը ենթադրում է երկկողմանի միասնական կապվածություն և հիմնվում է սուբյեկտների, նրանց փոխադարձ շահերի վրա: Օրենսդիրը, իրավակիրառ մարմինը կատարում են միջնորդի ու մասնակիցների կողմից լիազորված անձի դեր իրավական կոմունիկացիայում, ով կարող է ապահովել կապ իրավունքի սուբյեկտների միջև: Իրավական կոմունիկացիան նշանակում է սոցիալական համագործացկության հատուկ տիպ, որն ավելի կատարյալ է, քան կոմունիկացիայի քաղաքական տիպը, քանի որ կառուցվում է ոչ թե ֆիզիկական բռնության վրա, այլ բանականության ու արդարության վրա, հետևաբար բարձրագույն երևույթ է քաղաքականության հանդեպ:

4. Հասարակական զարգացման վաղ փուլերում իրավական կոմունիկացիան հանդես է գալիս որպես իրավական կարգավորման արդյունք, որը հասկացվում է որպես նորմատիվ իրավական համակարգի նպատակաուղղված ազդեցություն հասարակության, նրա սուբյեկտների վրա: Այն իրավակարգավորման ածանցյալ տարր է: Իրավական հասարակության, իրավական պետության անցման շրջանում իրավական կոմունիկացիայի և իրավակարգավորման միջև հարաբերակցությունը փոխվում է: Իրավական կոմունիկացիան ձեռք է բերում ինքնուրույն նշանակություն իրավակարգավորման հանդեպ, որը դառնում է իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Իրավակարգավորման բնույթը նույնպես փոխվում է, հանդես գալով սկզբում որպես պետական կառավարման գործունեության հատուկ տարատեսակ՝ իրավական կարգավորումը ձևափոխվում է իրավաբանական գործունեության պրոֆեսիոնալ տեսակի, որն ապահովում է իրավունքի սուբյեկտների միջև իրավական կապը:

5. Իրավունքն իր պատմական զարգացման արդյունքում անցնում է երեք հիմնական փուլեր, որոնցից յուրաքանչուրին համապատասխանում է իրավական սուբյեկտների հատուկ կազմը ու նրանց կապերի հատուկ բնույթը:Առաջին աստիճանը նախապետական կամ նախաքաղաքական իրավունքն է, ուր հիմնական սուբյեկտը ցեղն է, տոհմը: Անհատը այստեղ չի առանձացվում որպես իրավական անձ, այն սոցիալական հանրույթի մաս է:

Առաջին պատմական տիպի համար բնութագրական են համակարգված կազմակերպված իրավական հարկադրանքի բացակայությունը, իրավական նորմերի համաձուլումը բարոյական նորմերի, կրոնի և այլնի հետ, որպես իրավունքի աղբյուր՝ սովորույթի առկայություն: Այս իրավունքը տարերային-բնական է, նրա հիմքում ընկած է անհրաժեշտությունը:

Իրավական զարգացման երկրորդ փուլը պետական (քաղաքական) իրավունքն է, ուր առաջին տեղը տրվում է պետությանը, որն ավելի վերադաս է, քան հասարակությունը և մարդը, նրա իրավաբանական նպատակներին ու իշխանական բնույթին համապատասխանում է օրենքը: Պետական (քաղաքական) իրավունքի համար բնորոշ է կազմակերպված պետական հարկադրանքը, այն դեռևս լիովին բանական, ռացիոնալ իրավունք չէ, այն իրավունք է, որը հիմնվում է ուժի վրա: Տվյալ փուլում դեռևս չի իրականանում իրավական կոմունիկացիայի տրամաբանությունը, իրավական գաղափարը ճնշվում է քաղաքական իշխանության կողմից, իրավական իմաստով ոչ հասուն անձին համապատասխանում է լիովին ոչ հասուն կոմունիկացիոն տիպը:

Իրավական զարգացման երրորդ փուլը միայն նոր է հասունանում: Անձնակենտրոն գաղափարները, իրավական պետության հիմնադրույթը, բնական-իրավական տեսությունները հող են նախապատրաստել մարդու՝ որպես իրավունքի առաջնային սուբեյկտի ճանաչման համար:

Այն սուվերեն (ինքնիշխան) անձի, մարդու իրավունք է: Նրան պետք է համապատասխանի կոմունիկացիայի մեկ այլ տիպ և հասարակական կառույցի մեկ այլ տեսակ, որն իրավական է, հիմնվում է ոչ թե ուժի գերակայության, այլ իրավունքի ուժի և հասարակության բանական կառուցման վրա:

6. Անձի իրավական ազատությունը պաշտպանող հիմնադրույթի տեսանկյունից՝ իրավունքի մի սուբյեկտի ինքնավարությունն անկախություն չէ մյուսից, ինչպես ավանդապես հասկացվում է գրականության մեջ, այլ ուրիշ սուբյեկտի հետ իրավական կապի միջոցով սեփական կամքի իրականացում է՝ ազատության կոմունիկացիոն հասկացության տեսանկյունից: Այնտեղ, որտեղ փիլիսոփաները տեսնում են ազատության սահմանափակում, կամքի հանդեպ արգելք, իրավաբանները պետք է տեսնեն ազատության աղբյուր: Այլ անձի

գոյությունն է միայն թույլ տալիս կամքին ինքնաիրացման: Սուբյեկտը այլ անձին ընկալում է որպես սեփական ձգտումների կատարող, ում միջոցով այն կարող է իրականացվել: Իրավական ազատությունն ըստ իր բնույթի բացասական չէ, այն ոչ թե ինչ-որ մի բանից ազատություն է, այլ գիտակցված, կառուցողական, սոցիալական համագործակցության ազատություն է, այն իրականանում է իրավական կապերում, հարաբերություններում, իրավական համագործակցության մեջ:Իրավական ազատությունը չի սահմանափակվում միայն գործելու հնարավորությամբ, այն որպես իրական ազատություն կայանում է իրավական կապերում, նաև առկա է որպես ինստիտուցիոնալ ազատություն, որպես ինստիտուտ, նորմ, օրենք և այլն: Այն ունի բազմաթիվ վիճակներ, ձևեր, դրսևորումներ:

7. Իրավունակությունը և գործունակությունը իրավասուբյեկտիվության երկու փուլեր են: Ավանդական մոտեցումը իրավունակության ու գործունակության սահմանման հանդեպ կառուցվածքային կապերի պրիզմայի միջոցով առաջացնում է բարդություններ: Առավել համարժեք է նրանց դիտարկումը զարգացման կապերի միջոցով, երբ մի վիճակը ընդունվում է որպես ցածրագույն, իսկ մյուսը բարձրագույն, իսկ հետո գնահատվում է անցումը այս վիճակների միջև: Ելնելով նշված մոտեցումից՝ գործունակությունը պետք է սահմանել որպես ավելի բարձր աստիճան, փուլ՝ համեմատ իրավունակության, գործունակությունը ներառում է իրավունակությունը որպես իր նախադրյալ:

Վերացական իրավասուբյեկտիվությունը վերացական անձի արժանիք է, իրավունքի ցանկացած սուբյեկտի համար պետք է լինի իր անձնավորված կապը իրավակարգի հետ:

8. Իրավունակությունը ներառում է իրավունքի սուբյեկտի ելակետային ու ֆորմալ սահմանումը, այն նախորդում է բոլոր այլ ոլորտներին, կողմերին, որը բնութագրում է իրավունքի սուբյեկտին: Իրավունակությունը ֆորմալ է, չի բացահայտում իրավական սուբյեկտի գոյության բովանդակային կողմերը, այն միայն այդ սուբյեկտի հատկանիշն է:Այս առումով, որպես իրավունակության տարրեր՝ հանդես են գալիս ոչ թե իրավունքները կամ պարտականությունները, այլ իրավունքում անձի իրավունքներ ու պարտականություններ կրողը, իրավահարաբերությունների սուբյեկտը, իրավագիտակցության սուբեյկտը:

9. Անձի գործունակությունը անհրաժեշտ է դիտարկել ոչ թե որպես իրավունքի սուբյեկտի ֆորմալ, կայուն որակ, որը, մի անգամ առաջանալով, մնում է անփոփոխ, անկախ նրա կամքից, նրա ձգտումներից, այլ պայմաններից, այլ այն իրենից ներկայացնում է անձի բարդ իրավական վիճակ, որն արտացոլում է իրավունքի սուբյեկտի տարբեր գործառույթների կատարման անընդհատ

փոփոխվող մակարդակը: Մի կողմից, իրավունքի սուբյեկտի գործունակությունը պայմանավորվում է գործող օրենսդրությամբ, իսկ մյուս կողմից՝ անձի կամքով, գիտակցությամբ և այլ ներքին գործոններով: Գործունակությունը, քանի որ արտահայտում է անձի իրավական վիճակը, միշտ անհատական է: Գործունակության կառուցվածքը, որը սկզբնապես ձևավորվել է իրավունքի սուբյեկտներից մեկի հիման վրա, ունի տեսական վերամշակման կարիք:

Որպես իրավունակություն ենթադրվում է հասկանալ իրավակարգի շրջանակներում անձի՝ իրավունքի սուբյեկտի գործառույթների իրականացման պատրաստականությունը՝ կամքի, գիտակցության, կազմակերպչական, գույքային, այլ պայմանների տեսանկյունից:

10. Ընդհանուր հիմքը, որից առաջանում են իրավունքի բոլոր առկա սուբյեկտները, հանդիսանում է մարդը՝ որպես իրավական երևույթ: Իրավաբանական անձինք, այդ թվում պետությունները, հանրային և մասնավոր կորպորացիաները, անհատները որպես իրավունքի սուբյեկտներ ստանում են իրենց իրավական որակները պոզիտիվ իրավունքի շնորհիվ: Իրավաբանական անձից մարդը կտրվում է ավելի հատուկ, անհատական կերպով ու տեղավորվում է անհատի՝ որպես իրավունքի սուբյեկտի ձևում, իսկ ընդհանուրը՝ կազմակերպությունը տեղակայվում է իրավաբանական անձի ձևում, առանձնացվում են մարդու տարբեր իրավական կողմեր: Մարդը, ճանաչվելով իրավունքի սուբյեկտ, հանդիսանում է իրավունքի ամբողջական համակարգի միակ բանական սուբստանցը:

11. Կարելի է առանձնացնել իրավական անձի էության մի քանի կարգեր: Առաջին, համասոցիալական էությունը, նրանում արահայտվում է իրավունքի հանդեպ արտաքին հայացքը իրավական անձի, սոցիալական համակարգում նրա տեղի նկատմամբ: Այն կայանում է նրանում, որ իրավական անձի միջոցով իրականանում են մարդու սոցիալական որակները, ձևավորվում է սոցիալական սուբյեկտը, հասարակությունը, տեղի է ունենում նրա ինստիտուցիոնալիզացիան: Երկրորդ, իրավական անձը ընդհանուր իրավական էություն՝ նրանում արտահայտվում է իրավական անձի իրավական բնույթը: Այն կայանում է նրանում, որ իրավական անձը իրավունքի սուբյեկտ է, որում միաձուլվում է անձի սոցիալական և կենսաբանական որակները:

12. Իրավաբանական անձը իրավունքի սուբյեկտի կարգավիճակ է ձեռք բերում բացառապես պոզիտիվ իրավունքի շնորհիվ, քանի որ իրավաբանական անձը, ըստ էության, ֆիկցիա է, որը գոյություն ունի և միաժամանակ գոյություն չունի որպես անձ: Հետևաբար, կազմակերպությունը (օրենքով սահմանված կարգով) ձեռք է բերում իրավունքի սուբյեկտի կարգավիճակ միայն իրավական

եղանակով, նրա իրավասուբյեկտությունը խիստ սահմանափակ է իր կանոնադրությամբ՝ ի տարբերություն իրավական անձի (մարդու) իրավասուբյեկտության, որի ծավալն ու բովանդակությունը անհամեմատ տարածական է:

13. Պետությունը որպես իրավունքի սուբյեկտ, իրավական կորպորացիա, նրա հիմնական առաքելությունն է ապահովել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավական հաղորդակցման, իրավական կոմունիկացիոն համակարգի կայունությունը, որն ուղղված է նրանում իրավունքի սուբյեկտների կամքի համաձայնեցմանը, իրավական կապերի ձևավորմանը, իրավական շահերի իրականացմանը: Պետությունը՝ իրավունքի այլ սուբյեկտներից տարբերվում է նրանով, որ այն ստեղծվում է իրավունքին ծառայելու համար, որ իրավունքը սահմանում է նրա նշանակությունը, գործառույթները և ներքին կազմակերպվածությունը: Դրա համար էլ, ճանաչելով պետությունը որպես իրավական յուրահատուկ սուբյեկտ, պետք է ճանաչել ոչ միայն իրավունքի կողմից ամբողջ պետական ոլորտի ձևակերպվածությունը, կարգավորվածությունը, այլ այն, որ իրավունքը արտահայտում է պետության ոգին, հասկացությունը, այն բովանդակորեն սահմանվում է որպես իրավունքի հատուկ սուբյեկտ, որը տարբերվում է այլ իրավական անձանցից:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսական աշխատանքի արդյունքների հիման վրա ձևավորված հասկացությունները, հետևություններն ավելի կխորացնեն տեսական գիտելիքները իրավունքի սուբյեկտի վերաբերյալ և կարող են հիմք հանդիսանալ հետագա սումնասիրությունների իրականացման համար:

Հետազոտության գործնական նշանակությունը նրանում է, որ աշխատանքում ձևակերպված հիմնարար դրույթները կարող են օգտակար լինել օրինաստեղծ, իրավակիրառ և իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև իրավաբանական ինստիտուտների և ֆակուլտետների ուսանողության համար:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը: Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է աշխատանքի քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը:Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը

պայմանավորված է դրված նպատակով և խնդիրներով, ըստ որի՝ աշխատանքը բաղկացած է ներածական մասից, երեք գլխից, որոնք ներառում են տասներեք ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը.

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը,հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Իրավունքի սուբյեկտի հասկացության հիմնախնդիրը իրավունքի տեսության տեսանկյունից»** վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում **«Իրավունքի սուբյեկտի ընդհանուր հասկացությունը»** վերնագրով հեղինակը բացահայտում է իրավունքի սուբյեկտի ընդհանուր հասկացությունը: Իրավունքի սուբյեկտը գտնվում է հատուկ սոցիալ-իրավական իրականությունում, որը տարբերվում է ֆիզիկականից, հանդիսանում է հատուկ իրավական իրականություն, այն ֆիկցիա չէ, այլ հասկացություն, որը ներառում է իրավունքի համար էական որակներ: Ի տարբերություն ֆիկցիայի, որը չի հիմնվում իրականության վրա, իրավունքի սուբյեկտ հասկացությունը ստեղծվում է վերացական արդյունքում որպես իրականության ընդհանրական կերպար, որպես իրավական անձ կամ իրավաբանական կազմակերպություն:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի սուբյեկտի հիմնական հատկանիշները»** վերնագրով, հեղինակը համակարգված վերլուծության է ենթարկում իրավունքի սուբյեկտի հիմնական հատկանիշները: Իրավունքի սուբյեկտի հիմնական հատկանիշը՝ իրավասուբյեկտությունն է, որը բովանդակային առումով բացկացած է իրավունակությամբ և գործունակությամբ: Եթե իրավունակությունը ֆիզիկական անձի մոտ առաջացնում է ծննդյան պահից, իսկ ավարտվում է նրա մահվամբ, ապա լրիվ գործունակությունը, որպես կանոն առաջանում է չափահաս լինելուն հանգամանքով կամ էմանսիպացիայի միջոցով:

Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում **«Իրավունքի սուբյեկտը բնական և դրական իրավունքի տեսանկյունից»** վերնագրով, դիտարկվում է իրավունքի սուբյեկտի ընկալումը բնական իրավունքի և պոզիտիվ (գործող իրավունքի) տեսանկյունից: Ըստ պոզիտիվ իրավունքի՝ իրավունքի սուբյեկտներ կարող են լինել՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում նաև պետությունը:

Բնական իրավունքը որպես իրավունքի սուբյեկտ ճանաչում է միայն

բանական էակին՝ մարդուն, իր ծննդյան պահից: Բնական և դրական իրավունքի կողմնակիցներն առանձնացնում են մեկ ընդհանուր բնութագրական հատկանիշ՝ իրավական կամքը, որպես իրավունքի սուբյեկտի բնական, բանական և դրական կողմ:

Աշխատանքի առաջին գլխի չորրորդ ենթագլխում **«Իրավունքի սուբյեկտը որպես պատմամշակութային** վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկում է իրավունքի սուբյեկտի՝ որպես իրավական կատեգորիայի և իրավական մշակույթի պատմական զարգացման (ձևավորման, լինելիության) հիմնական ուղենիշները:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «**Իրավունքի սուբյեկտի հասկացութային առումների բազմազանությունը և հիմնական հայեցակարգերը»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում «**Իրավունքի սուբյեկտի հասկացութային առումների բազմազանությունը**» վերնագրով, հեղինակը քննական վերլուծության է ենթարկում իրավունքի սուբյեկտի ընկալման բազմազանությունը, դրանց յուրաքանչյուրի բովանդակային առանձնահատկությունները և բնութագրական հատկանիշները:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում **«Իրավունքի սուբյեկտի հիմնական հայեցակարգերը»** վերնագրով, հեղինակը վերլուծության է ենթարկել հետևյալ հայեցակարգային մոտեցումները. Իրավունքի սուբյեկտը մարդաբանական տեսանկյունից, ֆորմալ-իրավաբանական հայեցակարգը, իրավունքի սուբյեկտի թերապևտիկ հայեցակարգը և իրավական սուբյեկտի ժամանակակից հայեցակարգը և դրանց առանձնահատուկ գծերը:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Իրավասուբյեկտության հասկացությունը և բովանդակային բաղադրիչները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում **«Իրավասուբյեկտությունը որպես իրավունքի սուբյեկտի անքակտելի որակական հատկություն»** վերնագրով, բացահայտվում է իրավասուբյեկտության բովանդակային կառուցվածքը և յուրաքանչյուր բաղադրիչի առանձնահատկությունները:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում **«Իրավունակության դերն ու նշանակությունը իրավունքի սուբյեկտի ձևավորման գործընթացում»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկում է իրավունակության՝ որպես իրավասուբյեկտության առաջնային, էական տարրի նշանակությունը իրավունքի սուբյեկտի ձևավորման գործընթացում:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Գործունակությունը որպես**

իրավունքի սուբյեկտի գործառնության նախապայման» վերնագրով, կարևորվում է գործունակության կարևորությունը լիարժեք իրավասուբյեկտության ձևավորման և գործառնության կայացման խնդրում:

Եզրակացություններ

1. ժամանակակից աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-իրավական վերաձևավորումներն առաջացնում են իրավունքի հասկացման հանդեպ նոր մոտեցման անհրաժեշտությունը, խոսքը գնում է իրավունքի՝ ոչ թե օբյեկտիվորեն այլ իրավական հաղորդակցման մասնակիցների կարգով՝ որպես արտաքին իրավակարգ, նորմերի, իրավահարաբերությունների և այլնի միասնության, այլ սուբյեկտիվորեն, որպես ոլորտի, որում իրականանում են մարդու իրավական որակները, նրա շահերը, ձևավորվում է անձի վերաբերմունքն իրավունքի էության և բովանդակության վերաբերյալ: Իրավունքի նման հասկացման դեպքում իրավահամակարգում հաշվարկի սկզբանակետ է ընդունվում ոչ թե իրավունքի նորմը կամ մարդու հանդեպ արտաքին այլ օբյեկտը, այլ իրավունքի սուբյեկտը՝ իրավական անձը:

2. Իրավագիտության մեջ մինչև այժմ չի ձևավորվել իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսություն, որի անհրաժեշտությունը թելադրվում է ոչ միայն տեսական, այլ նաև գործնական խնդիրներից ելնելով: Աշխատանքում կատարվել է իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսության փիլիսոփայական-մեթոդաբանական հիմքերի համակողմանի վերլուծություն և առավել կարևոր դրույթների ձևակերպման հեղինակային մոտեցում:

3. Աշխատանքում համակարգված ձևով իրականացվել է իրավունքի սուբյեկտի խնդրի բազմակողմանի վերլուծություն, կատարվել է իրավունքի ընդհանուր տեսության կողմից ճյուղային իրավաբանական գիտությունների փոխառնված իրավունքի սուբյեկտի՝ իրավահարաբերությունների մասնակցի մասին դոկտրինալ պատկերացումների տեսական մշակում: Կատարված վերլուծության ընթացքում մշակվել է իրավունքի՝ որպես սուբյեկտների համակարգի հասկացությունը, որոնք ստեղծում են իրավաշփման հատուկ տիպ:

4. Սույն հետազոտությունում առաջարկվել է իրավունքի համակարգի առաջնային տարրի ու իրավահամակարգի խնդրի լուծում, քննադատորեն իմաստավորված ու վերաձևավորված է իրավագործունակության կատեգորիան, ընդհանուր տեսական դիրքորոշումներից ելնելով սահմանված են իրավունքի սուբեյկտների դասակարգման հիմքերը, սահմանված են իրավաբանական անձի էության տարբեր մակարդակները, սահմանված են պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի առանձնահատկությունները, ձևակերպված է պետահիրավական սուբյեկտի նոր ընդհանուր տեսական հասկացությունը:

5. Մեր կողմից հետազոտության ընթացքում սահմանված է, որ իրավունքի որպես սուբյեկտիվ-կոմունիկատիվ համակարգային կառույցին բնորոշ է կոմունիկացիայի հատուկ ձև, որտեղ իրավական կոմունիկացիան հիմնվում է ընդհանուր իրավական կամքի ձևավորման վրա, որում համատեղվում է մեկ անձի կամքը մյուսի հետ: Կոմունիկացիայի իրավական ձևը վերաբերում է ոչ թե կամքի, այլ արտաքին կողմի բովանդակությանը: Կոմունիկացիայի տվյալ ձևն առաջարկում է ինքնանպատակների միավորում, հիմնվում է սուբյեկտների ազատության, նրանց փոխադարձ հետաքրքրվածության սահմանման վրա: Օրենսդիրը, իրավակիրառողը կատարում են իրավական հաղորդակցման մեջ միջնորդի՝ մասնակիցների կողմից օբյեկտիվ ու լիազորված մասնակիցների դեր, ով կարող է ապահովել իրավունքի սուբյեկտների միջև կապը:Իրավական կոմունիկացիան նշանավորում է սոցիալական համագործակցության հատուկ տիպ, որն ավելի կատարյալ է, քան կոմունիկացիայի քաղաքական տիպը, քանի որ կառուցվում է ոչ թե ֆիզիկական բռնության և ինքնիշխանության ուժի միջոցով, այլ բանականության, իրավական օրինականության և արդարացիության վրա, հետևաբար հանդիսանում է կարգի քաղաքականության հանդեպ ավելի բարձր երևույթ:

6. Սահմանելով իրավունքի սուբյեկտի խնդրի հետազոտության հետագա հեռանկարները, կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները.

- Անհրաժեշտ է մշակել իրավունքի սուբյեկտի ամբողջական տեսություն, որի համաձայն իրավունքի և իրավական համակարգի առաջնային տարրը հանդիսանում է ոչ թե իրավունքի նորմը, այլ իրավական սուբյեկտը, որն իրենից ներկայացնում է իրավաբանական ձև, որում ամփոփված են մարդու իրավական որակները:
- Ելնելով վերոնշյալ նախադրյալներից, պետք է ճշգրտել հիմնական իրավական հասկացությունները իրավունքի սոցիալական դերն ու նշանակությունը, իրավունքի սուբյեկտի էությունն ու բովանդակությունը, իրավական համակարգում նրա իրական տեղն ու դերը, իրավունքի օբյեկտը, իրավունքի իրացումը, իրավակիրառությունը և այլն:
- Անհրաժեշտ է հատուկ ոռումնասիրության առարկա դարձնել իրավական կոմունիկացիայի խնդիրը, սահմանել նրա առանձնահատկություններն ի համեմատ սոցիալական կոմունիկացիայի այլ ձևերի, ձևակերպել նրա սկզբունքները, իրավական կոմունիկացիայի և իրավունքի, իրավական կարգավորման հարաբերկցությունը և այլն:
- Անհրաժեշտ է ճշգրտել իրավական կարգավորման հասկացության ու մեխանիզմի հասկացությունները, ելնելով իրավական համակարգում իրավունքի

սուբյեկտի առաջնայնությունից:

- Անհրաժեշտ է վերանայել իրավական պետության, նրա հատկանիշների, սկզբունքների մասին պատկերացումները, հաշվի առնելով այն, որ սկզբնականում իրավական պետության հիմնադրույթը հիմնվում է իրավական անձի կարգավիճակի, նրա իրավական իրավունքների և ազատությունների վրա:
- Անհրաժեշտ է բազմակողմանիորեն հետազոտել իրավունքի սուբյեկտի հասկացման տարբեր ոլորտները՝ իրավունքի սուբյեկտը որպես իրավական կամք, որպես անձ իրավունքում, որպես իրավական արժեք, որպես իրավական գործիչ, որպես իրավական գործընթացի կողմ և այլն:

Նշված հարցադրումներից գրեթե բոլորը մեր հնարավորության սահմաններում ուսումնասիրվել են սույն հետազոտությունում, սակայն դեռևս առկա են բազում հարցերի լուսաբանումներ, որոնք, մեր կարծիքով, իրավագիտության արդի հիմնախնդիրներից են:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

ա) Մենագրություններ.

1. Այվազյան Ա. Իրավունքի սուբյեկտների էությունը և ժամանակակից հայեցակարգային մոտեցումները: Երևան, Եվրոպրինտ, 2020, 234 էջ:

2. Այվազյան Ա. Իրավասուբյեկտության հասկացությունը և բովանդակային առանձնահատկությունները: Երևան, Եվրոպրինտ, 2020, 234 էջ:

բ) Գիտական հոդվածներ

3. Այվազյան Ա. Իրավունքի սուբյեկտի կարգավիճակը (տեսական հարցեր)// «Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. Մարտահրավերներն ու դրանց լուծումները»: Գիտական հոդվածների ժողովածու: Երևան, Եվրոպրինտ, 2019, էջ 270-287:

4. Այվազյան Ա. Իրավունքի սուբյեկտի հիմնական հայեցակարգերը// «Օրինականություն», №110, 2019, էջ 49-57, էջ 70:

5. Այվազյան Ա. Իրավունքի սուբյեկտի մարդաբանական հայեցակարգի տեսանկյունից // «Օրինականություն», №111, 2019, էջ 68-72:

6. Իրավասուբյեկտությունը որպես իրավունքի սուբյեկտի անքակտելի որակական հատկանիշ // «Օրինականություն», №123, 2021, էջ 35-39, էջ 74:

7. Այվազյան Ա. Իրավական շփումը և իրավունքի սուբյեկտը. Փոխհարաբերակցության հիմնախնդրի շուրջ //Փիլիսոփայությունը արդի աշխարհում: Գիրք XI, 16 նոյեմբերի 2021 թ., Երևան, 2021, էջ 314-319:

Резюме

Айвазян Анаит Гарниковна

Сущность и содержание субьекта права: теоретико-правовой анализ.

В данном диссертационном исследовании всесторонне и обстоятельно изучаются теоретические и практические вопросы субьектов права.

Актуальность исследования данной темы обусловлена возрастающей ролью субьекта прав в области праворегулирования. В работе всесторонне и обстоятельно рассматриваются сущность и содержательные особенности субьекта права.

В диссертационной работе дано авторское определение субьектов права-это потенциальные участники правоотношений, лица, которые могут быть лишь носителями юридических прав и обязанностей. Субьект правоотношения-субьект права, который реализовал свою правосубьектность и уже стал участником конкретного правового отношения.

Субьектами права являются также устойчивые постоянные образования, которые характеризуются единством воли и цели, а также определенной внутренней организацией.

Субьекты права наряду с нормами права и юридическими фактами могут выступать в качестве одной из предпосылок возникновения и реализации правоотношений.

Научная новизна диссертационной работы состоит в том, что автор рассматривает сущность и содержание субьекта права более широкого плана. Это не только участник того или иного конкретного правоотношения, но и носитель права и обязанностей вне конкретных правоотношений,обладает постоянной и устойчивой правосубьектностью,которые его превращают как в лицо правовое, так и правовой личностью качествам, которой обладает личность с момента рождения.

Данное диссертационное исследование, по мнениню автора, развивает и

дополняет наши представления о субьектах права,учение о правовой личности.

В данной диссертационной работе подробно рассматриваются основные признаки и содержательные особенности теории правовой личности-субьекта права.

Теоретическая значимость данной диссертации заключается в том, что сформулированные в нем концептуальные подходы и выводы развивают и дополняют наши знания о правовой личности (субьекта права).

Результаты работы могут использоваться в качестве теоретической базы для дальнейших исследований.

Практическая значимость работы заключается в том,что содержащиеся в нем рекомендации и выводы могут найти практическое применение в правотворческой, правоприменительной и правоохранительной деятельности.

Материалы диссертационного исследования могут быть использованы также в учебном процессе по дисциплинам теории права и правовой личности.

Subject Matter and Substance of the Subject of Law.

Theoretical Framework of Legal Research

Anahit Garnik Ayvazyan

Abstract

Within (he framework of this Dissertation, theoretical and practical problematic aspects of the subject of law are thoroughly and comprehensively studied,

Actuality of studying the given topic lies in the increasing role of the subject of law in legal regulations.

Within the scope of this research work, subject matter and substantive aspects of the subject of law are studied.

The Dissertation gives the Author's definition of the subjects of law - potential participants of a legal relationship (also those beyond it), actors who can merely bear juridical rights and duties.

Subject of a legal relationship is a subject of law who has exercised their legal capacity and already become a participant of a certain legal relationship.

Subjects of law also include sustainable and permanent entities that are characterized by unity of will and purpose as well as by that of a certain internal structure.

Subjects of law, together with legal norms and juridical facts, can act as one of preconditions for establishment and fulfilment of a legal relationship.

Scientific novelty of this Dissertation lies in the fact that the Author studies the subject matter and substance of a subject of law in the broader sense. This is not only a participant of this or that certain legal relationship but also a bearer of rights and duties beyond a certain legal relationship, an individual who has a sustainable and permanent legal capacity having been enjoying it front the very moment of birth.

This *Dissertation,* in the Author's opinion, develops and supplements our understanding about the subjects of law as well as theories of legal person.

This Dissertation studies in detail die main Features and substantive aspects of the theory of legal person, i,e. subject of law.

Theoretical significance of this Dissertation lies in the fact that the conceptual approaches and conclusions provided for herein develop and supplement the knowledge about a legal person (subject of law).

The outcomea of this research work can serve os theoretical Ьшео for further researches.

Practical significance of this research work lies in die recommendations and conclusions contained herein dial can be practically applied in lawmaking and law-enforcement activities.

Materials of the Dissertation can also be used in the educational process - in the disciplines of the theory of law and legal person.